Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սյուզաննա Խաչատրյան - տնօրեն

2. Գործուղման վայրը և ժամկետները

Թուրքմենստանի հանրապետություն, մայրաքաղաք Աշգաբաթ
Գործուղում 4.11.2026-10.11.2026

3. Հրավիրող կողմը

Թուրքմենստանի հանրապետության մշակույթի նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման հիմնական նպատակն էր ապահովել <<Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն>> ՊՈԱԿ-ի մասնակցությունը «Երջանկության դարաշրջանի թատերական արվեստը» հինգերորդ միջազգային փառատոնին:

Մասնակցությունը միտված էր զարգացնելու միջազգային մշակութային համագործակցությունը, ընդլայնելու թատրոնի միջազգային կապերը,ստեղծել հյուրախաղերի և մասնագիտական փոխանակումների նոր հնարավորություններ, ինչպես նաև նպաստելու հայկական մշակութային ժառանգության ճանաչելիության բարձրացմանը: Միաժամանակ մասնակցությունը հնարավորություն տվեց ուսումնասիրել միջազգային փորձը, ծանոթանալ ժամանակակից բեմարվեստի նոր միտումներին որոնք հետագայում կարող են կիրառվել թատրոնի ստեղծագործական գործունեության ընթացքում:

5. Քննարկված թեմաները

Կազմակերպիչները կլոր սեղանի շուրջ էին համախմբել տարբեր երկրների թատրոնների ղեկավարների և ռեժիսորների՝ տարբեր երկրների և թատերական դպրոցների ներկայացուցիչների: Հանդիպումը դարձավ կարևոր մասնագիտական

հարթակ՝ բաց երկխոսության, փորձի փոխանակման և միջազգային համագործակցության հեռանկարների քննարկման համար:

Քննարկման առանցքում էին փառատոնի կազմակերպման և անցկացման հարցերը, ժամանակակից թատերական արվեստի զարգացումը, մշակութային կապերի ամրապնդումը, ինչպես նաև հյուրախաղերի փոխանակման և համատեղ ստեղծագործական նախագծերի իրականացման հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Տնօրեն՝ Ս.Խաչատրյան

11.11.2026թ